

Մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ գործադիր մարմնի՝ տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,

2. բարձրագույն կրթությունը,

3. ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,

3. հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը,

4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ/,

5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,

6. աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2019թ. հունիսի 6-ից մինչև հուլիսի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Գյումրու

«Ֆոտոն» վարժարանում, հասցե՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անի թաղամաս, Ե.

Չարենցի 12/1, հեռ.՝ 094-82-34-88:

Մրցույթը տեղի կունենա **2019թ. հուլիսի 16-ին, ժամը 14:00-ին**, Գյումրու «Ֆոտոն» վարժարանում: